Նկարը Corel-ի առաջին էջում

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հրատարակվել և սերունդներին է հանձնվում մի շատ կարևոր աշխատություն, որտեղ հեղինակը՝ մեր հայրենակից, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանագետ-բանահավաք էսթեր Խեմչյանը, ընթերցողին է ներկայացնում Իջևանի ու շրջակա գյուղերի ինքնատիպ ու հարուստ ժողովրդագիտական նյութերը: Տարբեր պատճառներով, Տավուշի մարզի մյուս տարածաշրջանների համեմատությամբ, այս պատմաազգագրական շրջանը ժամանակի ընթացքում խորը չի ուսումնասիրվել, որի հետևանքով շատ պատմական փաստեր, տարբեր ավանդույթներ ու սովորույթներ անհայտ են մնացել ներկա սերունդներին: Հանգամանք, որ այսօր հաճախ տեղիք է տալիս բազմաբնույթ վեճերի՝ կապված այս կամ այն բնակավայրի հիմնադրման, տարիքի, այդտեղ բնակվող ժողովրդին բնորոշ վարքագծի հարցերի հետ:

Վերոնշյալն առավել ցայտուն է ընդգծում, թե որքան շնորհակալ գործ է կատարել էսթեր Խեմչյանը՝ ուսումնասիրելով և հրապարակելով Աղստևի հովտի պատմամշակութային և հոգևոր դիմագիծը ներկայացնող այս գործը: Այս հրատարակմանը նախորդել է երկար տարիների բանահավաքչական գործունեությունը,

որ նշանակում է բազմաթիվ շրջագայություններ և բանասացների հետ անհատական աշխատանք, այդ ամենի ճիշտ արխիվացում ու նաև վերարտադրում:

Կատարած ամբողջ աշխատանքի համար, առաջին հերթին որպես իջևանցի և նաև Իջևանի տարածաշրջանի բոլոր համայնքների կողմից ես շնորհակալություն եմ հայտնում էսթեր Խեմչյանին: Համոզված եմ, որ այս աշխատությունը կդառնա ոչ միայն մասնագետների հետաքրքրության ու քննարկման առարկան, այլև իջևանցիների սեղանի գիրքը: Սա շատ կարևոր ձեռնարկ կլինի նաև դպրոցում դասավանդող ուսուցիչ-ների համար: Աշխատությունը, կարծում եմ, առավել կհետաքրքրի Տավուշի մարզում գործող բարձրագույն և միջնակարգ մասնագիտական հաստատությունների դասախոսներին և ուսանողներին: Միևնույն ժամանակ սա հիմք, խթան կհանդիսանա հանրապետության հյուսիսարևելյան հատվածի, Տավուշի մարզկենտրոն Իջևանի և շրջակա գյուղերի վերաբերյալ նոր պատմական հիմնավորումների և այլ խորը ուսումնասիրությունների ու աշխատությունների համար:

Ա. Ղուլարյան
Տավուշի մարզպետ



Ինքնագիտակցության կայացման ճանապարհն ինքնաճանաչողությունն է: Այս դրույթն իմ կարծիքով ճիշտ է ոչ միայն անհատների, այլև ազգերի համար: Ազգային ինքնագիտակցության ձևավորման համար անգնահատելի է հայագիտության դերը: Էսթեր Խեմչյանի այս աշխատությունը լուրջ ներդրում է հայագիտության բնագավառում: Առանց ճանաչելու սեփական բնօրրանը, հնարավոր չէ լիարժեք ձևով սիրել այն: Այսպես հայրենասիրությունը մակերեսային զգացմունքից վերածվում է խորը գիտելիքների վրա հիմնված համոզմունքի: Աշխատությունը պարունակում է շատ հարուստ բանահյուսական նյութ, կատարված է տարիների մեծածավալ աշխատանք: Բանահյուսական հետազոտությունների ժամանակակից գիտական մեթոդաբանության կիրառումը աշխատությունը դարձնում է ավելի արժեքավոր: Մեր օրերում այս ծավալի աշխատանք կարող էր կատարել միայն նվիրյալը: Ես հաճախ եմ այցելում Իջևան և շփվում տեղի բնակչության հետ: Ինձ համար այս աշխատությունն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ Իջևանի տարածաշրջանը և նրա շնորհաշատ ու տաղանդավոր ժողովուրդը շատ հոգեհարազատ են ինձ:

Ողջունում եմ այս աշխատության հրատարակման գաղափարը և համոզված եմ, որ այն կարևոր դեր կունենա մեր ազգային ինքնագիտակցության և հայրենասիրական ոգու կայացման գործում:

Միքայել Վարդանյան
ԱԺ պատգամավոր